ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 49

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29-ը հունվարի 2021թ.

Առցանց կազմակերպված նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 33-ը: Նիստն անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն էր **Ա. Հ. Մակարյանը**, նիստի քարտուղարը՝ **Մ. Ս. Աթոյանը**:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մակարյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2019-2020 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Ց. Դավթյան**)

2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին: (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյան**)

3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2019-2020 ուստարի) մասին: (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյան**)

4. Ընթացիկ հարցեր:

4.1. ԵՊՀ ԻՄ-ի «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Նաթելա Գրիգորյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին: (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար **Մ. Ս. Աթոյան**)

4.2. ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու

համար սահմանված գործընթացին մասնակցելու համար երաշխավորելու մասին: (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար **Մ. Ս. Աթոյան**)

4.3. ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ նկարիչների միության անդամ Միհեր Օգանեսի Ստեփանյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին: (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտքարտուղար **Մ. Ս. Աթոյան**)

4.4. ԵՊՀ ԻՄ-ում դրամաշնորհային մրցույթ հայտարարելու մասին: (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի Տավուշ հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ. Ի. Մովսեսյան**)

Բաց քվեարկությամբ՝ 33 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**

Որոշում՝ 49/1

➢ Հաստատել նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին՝</u> «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2019-2020 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին» հարցի վերաբերյալ լսեցին **ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի** զեկույցը:

Նա նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 2019-2020 ուստարվա դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին մասնակցել են մասնաճյուղի՝ առկա ուսուցման ուսանողական հիմնական համակազմի 37,21%-ը (նախորդ հաշվետու տարում՝ 47,74 %), իսկ հեռակա ուսուցման՝ 1,53%-ը (նախորդ հաշվետու տարում՝ 25,50 %): Ա. Դավթյանը հավելեց, որ հարցումների արդյունքում թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցման համակարգերում գրանցվել է մասնակցության նվազում, ինչը պայմանավորված է համաճարակի (COVID 19), ինչպես նաև համալսարանական էլեկտրոնային փոստից ուսանողության քիչ օգտվելու հանգամանքով:

Ա. Դավթյանը նշեց, որ ըստ ֆակուլտետների հարցման արդյունքների՝ առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշն ունի Տնտեսագիտության, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետը:(Ավելի մանրամասն տես հավելված 1-ում):

Որոշվեց

Որոշում 49/2

Ընդունել ի գիտություն։

<u>Օրակարգի երկրորդ՝</u> «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյանի** հաղորդումը։

Ա. Մակարյանը մանրամասն ներկայացրեց 2020թ.-ի դրամական ելքերն ու մուտքերը։ Մասնավորապես նշվեց, որ դրամական մուտքերը նախատեսված են եղել 506 միլիոն դրամ՝ կատարվել է 94,4 % -ով՝ 478 234 000 դրամ, ելքերը նախահաշվով եղել է 490 254 500 դրամ, կատարվել է 93,3 % տոկոսով՝ 457 625 500 դրամ։ Մասնավորապես, հիմնական մուտքերը եղել են՝ վճարովի ուսուցման ծառայություններից՝ 298 միլիոն դրամ, պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից՝ 131 200,2 հազար դրամ, բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացվող տոկոսներից՝ 70 000,0 հազար դրամ, իսկ դրամական միջոցների ելքերը հիմնականում եղել են աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները և դրան հավասարեցված վճարումների ծախսերը՝ 413 100,0 հազար դրամ, որից վարչա-կառավարչական անձնակազմին տրվել է 104 960,0 հազար դրամ, ինժեներա-տեխնիկական և տնտեսական անձնակազմին հատկացվել է 66 586,0 հազար դրամ, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին հատկացվել է 159 386,0 հազար դրամ և այլն։ (Նախահաշվի կատարողականը կարող եք տեսնել հավելված 2-ում)։

Արտահայտվեցին պրոֆեսոր Մ. Միքայելյանը, դոցենտ Գ. Սիմոնյանը և այլոք։

Մասնավորապես **Մ. Միքայելյանը** առաջակեց համադրել և ուսումնասիրել ԵՊՀ ԻՄ բուջեի դինամիկան վերջին 5 տարիների համար, իսկ Ա. Մակարյանը հանձնարարեց գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանին կատարել այդ ուսումնասիրությունը և ներկայացնել գիտական խորհրդին։

Որոշվեց

Որոշում 49/3

Ընդունել ի գիտություն։

<u>Օրակարգի երրորդ</u>՝ «Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ի զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի (2019-2020 ուստարի)մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյանի** հաղորդումը։

Նա նշեց, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր գործունեությունն իրականացնում է 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրից բխող կարճաժամկետ պլանի համաձայն՝ կարևորելով կրթության որակը և նրա շարունակական բարելավումը։ Մասնաճյուղը հավատարիմ է իր առաքելությանը, և իր գործունեությամբ ձգտում է հասնել ծրագրով նախանշած նպատակներին։ Նա իր ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր, բարձրակարգ դասախոսական կազմ, ժամանակակից ենթակառուցվածքներ, և իր գործունեության բոլոր բնագավառներում ջգտում է ապահովել որակի անընդհատ բարելավում։

Նշվեց նաև, որ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի 25 խնդիրների 141 գործողություններից 22-ը (15.6%-ը) ամբողջությամբ իրականացվել են մինչև հաշվետու ժամանակահատվածը, մնացած 119 գործողությունները ներառվել են մասնաճյուղի ստորաբաժանումների 2019-20 ուստարվա և 2020-2021 ուստարվա սեպտեմբերից-դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի աշխատանքային պլաններում։

ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյանի** հաղորդումը ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 3-ում։

Որոշվեց

Որոշում 49/4

Ընդունել ի գիտություն։

<u>Ընթացիկ հարցեր։</u>

Լսեցին՝ 4.1. «ԵՊՀ ԻՄ-ի «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Նաթելա Գրիգորյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար

երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար **Մ. Ս. Աթոյանի** հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի «Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնի 2020թ. սեպտեմբերի 2-ի թիվ 1 նիստում քննարկվել է պատմական գիտությունների թեկնածու Նաթելա Գրիգորյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի «Հայոց պատմության և հասարակագիտության» դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Նաթելա Գրիգորյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Նաթելլա Սերոժի Գրիգորյանը ԵՊՀ ԻՄ-ի պատմության և քաղաքագիտության ամբիոնում աշխատել է որպես դասախոս 2009-2015թթ., նույն ամբիոնում 2015-2019թթ՝ որպես ասիստենտ, 2019թ.-ի հունվարի 24-ից նույն ամբիոնում զբաղեցնում է դոցենտի պաշտոն:

Ն. Ս. Գրիգորյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2014թ.-ին: Նա ունի 9 աշխատանք (1 մենագրություն, 8 գիտական, 1 ուսումնամեթոդական հոդված), որոնցից մենագրությունը, 3 գիտական և մեկ ուսումնամեթոդական հոդվածները հրատարակել է թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Նաթելլա Սերոժի

Գրիգորյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Փակ գաղտնի քվեարկությամբ՝ 27 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 49/5

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Նաթելլա Սերոժի Գրիգորյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Նաթելլա Սերոժի Գրիգորյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Նաթելլա Սերոժի Գրիգորյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Լսեցին՝ 4.2 *«* ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար երաշխավորելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի 2020թ. սեպտեմբերի 28-ի թիվ 2 նիստում քննարկվել է «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժ/ պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանը 1999թ.-ի սեպտեմբերի 1-ին ընդունվել է աշխատանքի ԵՊՀ ԻՄ-ի «Օտար լեզուների» ամբիոնում, որպես դասախոս, 2011թ.ից՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2016թ. սեպտեմբերի 1-ին նշանակվել է ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար և աշխատում է առայսօր։ Լ. Մ. Հարությունյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2016թ.-ին։ Նա ունի հրատարակված 14 գիտական հոդված, որոնցից 4-ը՝ գիտական և մեկ ուսումնամեթոդական աշխատանք հրատարակվել են ատենախոսության պաշտպանությունից հետո։

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Փակ գաղտնի քվեարկությամբ՝ 16 կողմ, 5 դեմ, 5 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 49/6

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Լսեցին՝ 4.3 «ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար **Մ. Ս. Աթոյանի** հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի 2020թ. փետրվարի 7-ի թիվ 5 նիստում քննարկվել է նույն ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և հաշվի առնելով հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները նրան երաշխավորել են դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և դիմել է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին՝ առաջարկելով միջնորդել ԵՊՀ-ի գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժ/պ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովը քննարկել է խնդրո առարկա հարցը և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժ/պ, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանը ԵՊՀ ԻՄ-ում 2006թ. –ից սկսած անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Նա Ռուսաստանի նկարիչների կազմակերպության անդամ է 1999թ.-ից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներքո նկարիչների կազմակերպության անդամ է 1998թ.-ից, ՀՀ նկարիչների միության անդամ է 1997թ.-ից սկսած: Մհեր Օգանեսի Ստեփանյանը մասնակցել է առնվազն 41 խմբային ցուցահանդեսների, որից 13-ը՝ 2013թ.-ից հետո, 10-ը ցուցահանդեսի մասնակցել է արտասահմանում: Մհեր Օգանեսի Ստեփանյանը ունի 9 անհատական ցուցահանդեսների մասնակցություն, որից 4-ը կայացել է Ռուսատանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում, 1998-2002թթ. Գերմանիայի Ախեն քաղաքում մասնակցել է ցուցահանդես վաճառքի: Նա 2002թ. , 2003թ., 2004թ. մասնակցել է Մոսկվայում կայացած մրցութային միջազգային ցուցահանդեսներին, 2013թ.-ին մասնակցել է ՀՀ նկարիչների միության կողմից կազմակերպված ՀՀ Պետական մրցանակի ներկայացված աշխատանքների ցուցահանդեսին:

Նրա 2000թ.-ին ՌԴ-ի մշակույթի կոմիտեի կողմից կազմակերպված «Ոսկե վրձին» հոբելյանական մրցութային ցուցահանդեսում <<Նատյումորտը մուրիակով>> նկարի համար արժանացել է պատվավոր դիպլոմի, 2004 թ.ին ՌԴ Մոսկվա քաղաքում կազմակերպված «Ոսկե վրձին» մրցութային ցուցահանդեսում <<Արուս>> աշխատանքի համար արժանացել է <<Золотое перо>> մրցանակին :

Նա, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի դ. ենթակետի, որը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել «մշակույթի և սպորտի ասպարեզում դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց», կարող է հավակնել դոցենտի գիտական կոչման:

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժ/պ, ՀՀ նկարիչների միության անդամ Միեր Օգանեսի Ստեփանյանի տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար և կարելի է միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին:

Այնուհետև քվեարկության դրվեց Միեր Օգանեսի Ստեփանյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու համար երաշխավորելու և ԵՊՀ գիտխորհրդի միջնորդությանը դիմելու հարցը:

Փակ գաղտնի քվեարկությամբ՝ 26 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 49/7

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ նկարիչների միության անդամ Միեր Օգանեսի Ստեփանյանի գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի դ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ

փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի ֆակուլտետի դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ նկարիչների միության անդամ Մհեր Օգանեսի Ստեփանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Լսեցին՝ 4.4 ԵՊՀ ԻՄ-ում դրամաշնորհային մրցույթ հայտարարելու մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի Տավուշ հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ. Ի. Մովսեսյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ կազմված մրցույթի հրավերն այլ բուհերի և ԳՊԿ-ի կազմակերպած հրավերից տարբերվում է նրանով, որ մրցույթի մասնակիցներին ներկայացված պահանջները ավելի պարզեցված են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնաճյուղում առաջին անգամ է, և փորձում ենք հնարավորինս շատ մասնակիցներ ունենալ: Նշվեց նաև, որ հետազոտական խմբերի մեջ կարող են ընդգրկվել այլ բուհերի կամ հետազոտական կենտրոնների հետազոտողներ: Հ. Ի. Մովսեսյանը նշեց, որ կարևոր է նաև հետազոտական թեմաների ընտրության ինչպես ռազմավարությունը, այնպես էլ թեմաները, որոնք պետք է հաստատվեն ԵՊՀ ԻՄ գիտխորհրդում, մասնավորապես կարևորվեց Տավուշի մարզի կարիքների բարելավմանն ուղված թեմաների ընտրությունը: Հ. Ի. Մովսեսյանը նշեց, որ Տավուշի մարզը համարվում է ագրոարդյունաբերական մարզ, այդմ կարևոր է այդ ուղղությամբ կատարվելիք հետազոտությունները:

Մրցույթին կարող են ներկայացվել կոլեկտիվ կամ անհատական հայտեր, որոնք պատրաստվել են ԵՊՀ ԻՄ-ի հաստիքային աշխատակիցների կողմից՝ պայմանով, որ ղեկավարը և նախագծի ենթադրվող բոլոր կատարողների առնվազն 50 տոկոսը ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցները կամ ուսանողներն են: (Մրցույթի հրավերի փաթեթը կարող եք ամբողջությամբ տեսնել **հավելված 4-ում)**: Նա նշեց, որ մրցույթին մասնակցելու հայտը փակ ծրարով ներկայացվում է «Տավուշ» հետազոտական կենտրոն, մինչև 2021 թ. մարտի 1-ը ներառյալ, լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ «Տավուշ» հետազոտական կենտրոնի քարտուղարությունից՝ զանգահարելով 099-148-199 և 093-455-564 հեռախոսահամարներով:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչներ պրոֆեսոր Մ. Միքայելյանը և դոցենտ Գ. Սիմոնյանը, ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, գիտքարտուղար Մ. Աթոյան և այլոք:

Մասնավորապես **Մ. Միքայելյանը** նշեց, որ Տավուշի մարզը շատ ուրիշ խնդիրներ էլ ունի և պետք չէ սահմանափակվել ագրոարդյունաբերական թեմաներով, որպեսզի Մասնաճյուղում տարբեր մասնագիտությամբ հետազոտողներ կարողանան մասնակցել մրցույթին:

Գ. Սիմոնյանը առաջարկեց, հայտարարության 1.6 կետում հաշվետվությունների ժամկետները երկարացնել, քանի որ մեկ ամիսը քիչ ժամանակահատված է հետազոտելու և հաշվետվություն ներկայացնելու համար, նշեց նաև որ գումարի հատկացման մեխանիզմը անհրաժեշտ է հստակեցնել, իսկ տպագրված հոդվածի պահանջը խիստ է դրված ժամկետների առումով:

Մ.Աթոյանը կարևորեց արդյունքների քննարկումը մարզպետարանի համապատասխան բաժնի հետ, իսկ թեմաների վերաբերյալ առաջարկեց նախնական փուլում աշխատել նաև Տավուշի մարզի ռազմավարական ծրագիրը կազմելու վրա:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 49/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 6-րդ և 12-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի

6-րդ և 12-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է

1. ԵՊՀ ԻՄ -ում հայտարարել ներքին դրամաշնորհային մրցույթ համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ